ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.10.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/79

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ
Բողոք բերող՝ «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ՝ Ս. Պապիկյանի
«Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Ա. Պարանյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 10.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ջորջ Այվազ ձակոփի» Ա/Ձ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին սահմանված կարգով ծանուցում ուղարկելու վերաբերյալ:

2. Պարտավորեցնել «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.09.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում ընդունած բոլոր որոշումները:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.09.2021թ.-ին:

13.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/79 համարի ծածկագիրը:

23.09.2021թ.-ին և 01.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.10.2021թ.-ին:

2. «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն 10.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարավել է ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73 ծածկագրով գնանշման հարցում /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝հանձնաժողովը որոշել է մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Այնուհետև՝ www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 06.09.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն տեղի է ունեցել բանակցություն՝ գների նվազեցման շուրջ, որին մասնակցել են թվով երկու մասնակիցներ, որոնք էլ իրենց հերթին կատարել են գների նվազեցումներ:

Գների նվազեցման շուրջ բանակցությունների հրավիրելու մասին «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն որևէ ծանուցում չի ստացել, որի մասին տեղյակ է պահել նաև Ընթացակարգի քարտուղարին, սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իր որոշումները թողել է անփոփոխ:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարավել է ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73 ծածկագրով գնանշման հարցում, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.08.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 8-րդ կետի համաձայն՝հանձնաժողովը որոշել է մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 06.09.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն տեղի է ունեցել բանակցություն՝ գների նվազեցման շուրջ, որին մասնակցել են թվով երկու

մասնակիցներ, որոնք էլ իրենց հերթին կատարել են գների նվազեցումներ, իսկ «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն ծանուցված չլինելով վերը նշված բանակցություններին՝ զրկվել է գների նվազեցում կատարելուց և ընդհանրապես բանակցություններին ներկա գտնվելուց:

Պատվիրատուն սահմանված կարգով և ժամկետում «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ին չի ուղարկել գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու ծանուցում, որից հետո «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ն Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետում հնարավորություն չի ունեցել և/կամ զրկվել է Ընթացակարգի մյուս երկու մասնակիցների հետ ներկայացված գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու:

Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ պահանջներ:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է

1. Պարտավորեցնել «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Ջորջ Այվազ ձակոփի» Ա/Ձ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին սահմանված կարգով ծանուցում ուղարկելու վերաբերյալ:
2. Պարտավորեցնել «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.09.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում ընդունած բոլոր որոշումները:

3. <u>«Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.09.2021թ.-ին թիվ 01/ԲՔԱ-ԼՕ/2/14778-2021 գրությամբ դիմել է «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 22.09.2021թ.-ին ներկայացված թիվ 02-326 գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնման ընթացակարգի գնային նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցության ծանուցումը ուղարկվել է armeps.am համակարգի միջոցով, սակայն ծրագրային խափանումից ելնելով ծանուցումը չի հասցեագրվել մասնակցին և լինում են դեպքեր ծանուցման ժամանակ ծանուցումը մի քանի անգամ է ուղարկվում: Համոզված լինելով, որ մասնակիցները ստացել են ծանուցում, հարկ չեմ համարել կրկին ստուգելու:

Հաշվի առնելով ծրագրային խափանումը և այն հանգամանքը, որ մրցույթում ներառված լաբորատոր քիմիական ազդանյութը խիստ անհրաժեշտ են ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին, խնդրում ենք նշանակել նոր բանակցություններ, քանի որ դա բխում է առաջին հերթին ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի շահերից:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից 23.08.2021թ.-ին հայտարարվել է «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսանում լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «50» չափաբաժնում:

iii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն:

iv. Ընթացակարգի հրավերի թիվ 6 հավելվածով նախատեսված պայմանագրի նախագծի անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով ապրանքների մատակարարման սկիզբ է համարվում պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է մինչև 06.09.2021թ.-ի ժամը 10:30-ը կասեցնել նիստը և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա վերոնշյալ օրը, վերոնշյալ ժամին:

vi. Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ բանակցությունների մասնակցել են «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն և «Օպտալոգ» ՍՊԸ-ն:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված

լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝

գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի

նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև

միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ

գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից 23.08.2021թ.-ին հայտարարված «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսանում լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «50» չափաբաժնում: Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ կետի համաձայն: Նույն հրավերի թիվ 6 հավելվածով նախատեսված պայմանագրի նախագծի

անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով ապրանքների մատակարարման սկիզբ է համարվում պայմանագիրը կնքելուց հետո ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում: Հանձնաժողովի 24.08.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 8.3-րդ կետով արձանագրչվել է, որ հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, Հանձնաժողովը որոշում է կայացրել մինչև 06.09.2021թ.-ի ժամը 10:30-ը կասեցնել նիստը և բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, որը տեղի կունենա վերոնշյալ օրը, վերոնշյալ ժամին: Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ բանակցությունների մասնակցել են «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ն և «Օպտալոգ» ՍՊԸ-ն:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, սույն գործում առկա փաստերը համադրելով նորմերին՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով հայտարարված գնման ընթացակագը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին հիմքով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի քննության ընթացքում չներկայացվեց որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների հրավիրելու մասին ծանուցումն ուղարկվել է armeps.am համակարգի միջոցով և որ այդ համակարգի միջոցով ծանուցվել է նաև «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ:

Սույն պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում բավարար գնահատված հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին armeps.am համակարգի միջոցով չուղարկելով բանակցությունների նիստի օրվա, ժամի և վայրի մասին ծանուցում գործել է ոչ իրավաչափ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Պրոֆ. Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից լաբորատոր քիմիական ազդանյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված

«ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում միաժամանակյա բանակցությունների մասին մասնակիցների ծանուցում չուղարկելը իրավաչափ չէ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/79 ծածկագրով բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՅԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/73» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- ընդունել «Ջորջ Այվազ Հակոփի» Ա/Ձ-ին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին ծանուցում ուղարկելու մասին որոշում,

- դադարեցնել 06.09.2021թ.-ին հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների արդյունքում ընդունված բոլոր որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**